ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվառման համար	Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
GROUP POLICY 04#6	1	19.12.2024թ.	13.01.2025թ.

Հեղինակ՝

Ստորաբաժանում	Պաշտոն	Անուն Ազգանուն
-	Գլխավոր հաշվապահ	Արմեն Հակոբյան

Նախահաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գլխավոր գործադիր տնօրեն	Հակոբ Անդրեասյան
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի նախագահ	Կլաուս Գրեսենբաուեր

Հաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահ	Ռաֆայել Սարգսյան

Բովանդակություն

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 3
2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ 3
4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ 4
6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ 5
7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ 7
8. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 7

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. ԱԿԲԱ բանկի խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է սահմանել Ակբա բանկի խմբի (այսուհետ՝ Խումբ) ընկերությունների ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև եկամուտների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգը՝ գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և փաստաթղթային հաշվառման միջոցով:

1.2. Քաղաքականությունը կիրառվում է Խմբի Հիմնական և Դուստր ընկերությունների տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԿԲԱ բանկի խումբ՝ ԱԿԲԱ բանկի խումբը ներառում է Հիմնական ընկերությունը և Դուստր ընկերությունը/ները.

Հիմնական ընկերություն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ՝ Խմբի մայր կազմակերպություն.

Դուստր ընկերություն՝ ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով, հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները.

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

3.1. ***Հիմնական ընկերության Խորհուրդը՝***

- հաստատում է Քաղաքականությունը
- հաստատում է Դուստր ընկերության բյուջեն,
- վերջնական պատասխանատվություն է կրում Խմբի մակարդակով հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության վերահսկման համար,

3.2. ***Դուստր ընկերության Խորհուրդը՝***

- պատասխանատվություն է կրում Դուստր ընկերության հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվողականության վերահսկողության համար,

3.3. ***Հիմնական ընկերության Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը՝***

- ապահովում է Խմբի մակարդակով Քաղաքականության արդյունավետ իրականացումը և բյուջեի հետ համապատասխանությունը:

3.4. ***Դուստր ընկերության գլխավոր տնօրենը՝***

- ապահովում է Քաղաքականության արդյունավետ իրականացումը Դուստր ընկերությունում,
- ապահովում է Դուստր ընկերության ներքին վերահսկողությունը:

3.5. ***Հիմնական ընկերության գլխավոր հաշվապահը՝***

- Իրականացնում է Խմբի մակարդակով Քաղաքականության գործառնական կիրառումը, իրագործումն ու վերահսկողությունը,
- ապահովում է Խմբի մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և հրապարակումը՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- ներկայացնում է Խմբի մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվություն Հիմնական ընկերության Խորհրդին և գործադիր մարմնին,
- ներկայացնում է Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները Մայր ընկերության Խորհրդին,
- պատասխանատվություն է կրում Հիմնական ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնական ընկերության մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Հիմնական ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների

հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Հիմնական ընկերության կանոնադրությանը համապատասխան:

3.6. ***Դուստր ընկերության գլխավոր հաշվապահը՝***

- իրականացնում է Դուստր ընկերության հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- Հիմնական ընկերության գլխավոր հաշվապահի նախնական համաձայնեցմանն է ներկայացնում Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամփոփ փաթեթը՝ համատեղ համաձայնեցված ձևաչափով և պարբերականությամբ,
- պատասխանատվություն է կրում Դուստր ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Դուստր ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Դուստր ընկերության կանոնադրությանը համապատասխան,
- ներկայացնում է Դուստր ընկերության վերաբերյալ հաշվետվությունը Դուստր ընկերության գործադիր տնօրենին, Դուստր ընկերության խորհրդին և Հիմնական ընկերության Գլխավոր հաշվապահին՝ Հիմնական ընկերության Խորհրդին ներկայացնելու համար:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Քաղաքականությունը ներառում է այն կոնկրետ սկզբունքները, հիմունքները, կանոնները, եղանակները, ձևերը և ընթացակարգերը, որոնք Խմբի Հիմնական ընկերությունն ընտրում է Խմբի հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու համար:

4.2. Քաղաքականությունը մշակված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և ՀՀ Կենտրոնական բանկի, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների (ՀՀՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների պահանջներին համապատասխան:

4.3. Քաղաքականությունը Խմբի Հիմնական և Դուստր ընկերություններին հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվություններում ապահովելու տեղին և արժանահավատ տեղեկատվություն, և հաշվի առնելով կատարվող գործառնությունների ոչ միայն իրավական ձևը, այլև տնտեսական բովանդակությունը, ճշգրիտ կերպով ներկայացնել Հիմնական և Դուստր ընկերությունների գործունեության արդյունքներն ու ֆինանսական վիճակը: Միաժամանակ Հիմնական և Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները կազմվում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄԽ) կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման սկզբունքներին, մասնավորապես, ամբողջականության, հաշվենկատության, չեզոքության, արժանահավատության, համադրելիության և այլ սկզբունքներին համապատասխան:

4.4. Հիմնական և Դուստր ընկերությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի ճանաչման և ֆինանսական հաշվետվություններում արտացոլման կանոնները և եղանակները սահմանվում են համաձայն ՀՀՄՍ-երի և ՖՀՄՍ-երի:

5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ

5.1. Հիմնական և Դուստր ընկերություններում հաշվապահական հաշվառումը վարվում է հաշվապահության համապատասխան ստորաբաժանումների կողմից:

5.2. Հիմնական և Դուստր ընկերություններում հաշվապահական հաշվառումը վարվում է մեմորիալ-օրդերային ձևով՝ կիրառական համակարգչային ծրագրերի օգնությամբ:

5.3. Հաշվապահական հաշվառումն իրականացվում է անընդհատ և խիստ փաստաթղթային հաշվառման հիման վրա:

5.4. Հաշվապահական փաստաթղթերի նկատմամբ պահանջները, դրանց վավերապայմանների ապահովումը, փաստաթղթաշրջանառության կազմակերպման և արխիվացման կարգը համապատասխանում է օրենսդրության և ներքին իրավական ակտերի պահանջներին:

5.5. Ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների ըստ բնույթի և տնտեսական բովանդակության դասակարգումը և հաշվառումը վարվում է համաձայն ՀՀՄՍ, ՖՀՄՍ, գործող հաշվային պլանի և դրա կիրառման հրահանգի պահանջների:

6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

6.1.Քաղաքականությունը սահմանում է ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվառման ՖՀՄՍ-երին համապատասխանող հիմունքներ, այդ թվում՝

1) եկամուտները և ծախսերը ճանաչվում և հաշվառվում են հաշվեգրման հիմունքով,

2) Հիմնական և Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունը կազմվում է համախմբման հիմունքով,

3) Հիմնական և Դուստր ընկերությունների Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները, բացառությամբ հողի, շենքերի և փոխադրամիջոցների, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները,

4) Հիմնական և Դուստր ընկերությունների հողերը, շենքերը և փոխադրամիջոցները հաշվառվում են վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները,

5) Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը,

6) Վերագնահատված ակտիվների օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ,

7) Վարձակալությամբ ստացված և տրված Հիմնական միջոցների հաշվառումն իրականացվում է ՖՀՄՍ 16՝ «Վարձակալություն» ստանդարտի պահանջներին համապատասխան,

8) Վարձակալությամբ տրամադրված գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է Դուստր ընկերությանը, ճանաչվում է որպես դեբիտորական պարտք, որը պետք է չափվի մեկնարկի ամսաթվի դրությամբ վարձակալությունում զուտ ներդրումների չափով: Տոկոսային եկամուտը բաշխվում է վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակահատվածների այնպես, որ ապահովվի հատուցման հաստատուն պարբերականություն վարձակալությունում չմարված զուտ ներդրումների նկատմամբ:

9) Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններում Վարձակալության գծով դեբիտորական պարտքը ներկայացված է հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ հոդվածում:

10) Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և զուտ իրացվելի արժեքի նվազագույնով,

11) Հիմնական և Դուստր ընկերությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչումը և չափումը կատարվում է «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան,

12) Հիմնական ընկերությունը Ֆինանսական ակտիվների դասակարգման համար Խմբի մակարդակով մշակում «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ի պահանջների համաձայն մեթոդիկա,

13) Պայմանագրերից հասույթի հաշվառումը կատարվում է ՖՀՄՍ 15-ի համաձայն: Հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ Հիմնական և Դուստր ընկերություններն ակնկալում են ստանալ իրավունք՝ ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց,

14) Տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մասն են կազմում, գտնվում են ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կարգավորվում են ՖՀՄՍ 9-ով և ՖՀՄՍ 16-ով,

15) Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը: Հաշվեկշռային արժեքի ապագա փոփոխությունները արտացոլում են համախմբումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի մասնաբաժնի փոփոխությունները: Խմբի մասնաբաժինը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստների փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

16) Խումբը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Իրական արժեքը չափվում է ՖՀՄՍ 13-ի պահանջներին համապատասխան:

17) Հիմնական և Դուստր ընկերությունների պայմանական ակտիվների և պայմանական պարտավորությունների ճանաչումը և չափումը կատարվում է «Պահուստներ, պայմանական ակտիվներ և պայմանական պարտավորություններ» ՀՀՄՍ 37 ստանդարտի պահանջներին համապատասխան,

18) ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային հավասարաչափ մեթոդով,

19) Հիմնական և Դուստր ընկերությունների նյութական պաշարների ինքնարժեքը հաշվառվում է ԱՄԱԵ (FIFO) մեթոդով,

20) Հիմնական ընկերությունն աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիրը չափում է ՖՀՄՍ 2-ի պահանջներին համապատասխան:

21) Հիմնական ընկերությունն իրականացնում է Խմբի աշխատակիցներին սպառողական և հիփոթեքային վարկերի շուկայական արժեքի գնահատում «Սահմանված հատուցումների գծով ակտիվի սահմանափակումը, նվազագույն ֆինանսավորման պահանջները և դրանց փոխազդեցությունը» ՀՀՄՍ 19 ստանդարտի պահանջներին համապատասխան՝ հիմնվելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վրա:

22) Հիմնական ընկերությունը ֆինանսական երաշխիքները հաշվառում է համաձայն ՖՀՄՍ 9 ստանդարտի պահանջների, այն է. ֆինանսական երաշխիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով:

23) Հիմնական ընկերությունը ոչ ֆինանսական երաշխիքները հաշվառում է որպես փոխատվության հանձնառություններ՝ կիրառելով ՖՀՄՍ 9 ստանդարտի արժեզրկման պահանջները: Հաշվառման մոտեցումը ենթակա է փոփոխման պայմանագրերում «Պրինցիպալի»՝ ապահովադրի, կողմից թողարկողին՝ Հիմնական ընկերությանը, ապագա վճարումները կարգավորող իրավաբանական մեխանիզմների փոփոխման դեպքում:

24) Դուստր ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում Հիմնական ընկերությունում և այլ բանկերում կարող է բացել ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերի նկատմամբ պահանջների գումարները ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները,

25) Հիմնական և Դուստր ընկերությունների Ակտիվներին վերաբերվող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և ճանաչվում որպես եկամուտ գծային մեթոդով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում,

26) Հիմնական և Դուստր ընկերությունների Հարկերի, պետական տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումը, պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների ձևավորումը և մարումը, ինչպես նաև հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների ճանաչումը և արտացոլումը հաշվետվություններում իրականացվում է ՀՀ հարկային օրենսգրքի, մաքսային օրենսդրության և այլ նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:

7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

7.1. Հիմնական և Դուստր ընկերություններն օրենսդրությամբ և Հիմնական ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակում են իրենց ֆինանսական հաշվետվությունները:

7.2. Հիմնական և Դուստր ընկերությունները հրապարակում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

7.3. ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 դրույթներից ելնելով՝ Հիմնական ընկերության Ֆինանսական տնօրինության կողմից յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է Հիմնական և Դուստր ընկերությունների համար էականության շեմ, որը Հիմնական ընկերության Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի նախահաստատումից հետո հաստատվում է Հիմնական ընկերության գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

7.4. Հիմնական ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 3-ի, իսկ Դուստր ընկերությունը՝ համաձայն՝ ՀՀ ԿԲ կանոնակարգ 15-ի: Հիմնական և Դուստր ընկերությունները կազմում և ներկայացնում են հարկային հաշվետվություններ՝ ՀՀ հարկային օրենսդրությանը և այլ նորմատիվային ակտերին համապատասխան:

8. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ	
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ	
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք	
ՀՀ հարկային օրենսգիրք	
«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենք	